

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 27

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի  
խորհրդի 21.12.2010թ. նիստի

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում կատարվող ՀՀ պետբյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները:
2. «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագրով» ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի երիտասարդ աշխատակիցների ներկայացրած հայտերի երաշխավորության հարցը:
3. Ֆակուլտետի ամբիոնների ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը:
4. ՀՀ պետբյուջեից ֆինանսավորվող «Նորմալ օպերատորների սպեկտրալ վերլուծություն և հակադարձ խնդիրներ» գիտական թեմայի ղեկավարի պարտականություններ կատարողի նշանակման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

**1. Լսեցին** - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում կատարվող, ՀՀ պետբյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները:  
Քննարկելով

- «Առաձգականության տեսության կոնտակտային և խառը խնդիրներ: Ալիքների դիֆրակցիան և ճառագայթումը առաձգական և էլեկտրաառաձգական միջավայրերում» (ղեկավար՝ Է.Խ.Գրիգորյան)
- «Օրթոգոնալ վերլուծություններ և մոտարկումներ» (ղեկավար Գ.Գ.Գևորգյան)
- «Դիֆերենցիալ խաղեր շատ նպատակային բազմությունների դեպքում և համակարգերի կայունության ուսումնասիրությունը» (ղեկավար Մ.Ս.Գաբրիելյան)
- «Նորմալ օպերատորների սպեկտրալ վերլուծություն և հակադարձ խնդիրներ» (ղեկավար Ի.Գ.Խաչատրյան)
- «Դեֆորմացվող միջավայրերի և ֆիզիկամեխանիկական դաշտերի փոխազդեցության խնդիրներ» գիտական թեմայի (ղեկավար Ս.Վ.Սարգսյան)
- «Նույնություններով և գերնույնություններով որոշվող համակարգեր և դրանց կիրառությունները» (ղեկավար Յու.Մ.Մովսիսյան)
- «Դինամիկական համակարգերի ղեկավարումն ու դիտումը կոնֆլիկտային իրավիճակներում և կիրառությունը մեխանիկական համակարգերի համար» (ղեկավար Վ.Ռ.Բարսեղյան)

- «Կիրառական պարամետրական մոդելների վերլուծություն, պարամետրերի գնահատում և օպտիմիզացիա» (ղեկավար Է.Ա.Դանիելյան) գիտական թեմաներում կատարված աշխատանքները, նշելով հաշվետու՝ 2008-2010թթ. ժամանակահատվածում կատարված աշխատանքների արդյունավետությունը և աշխատանքի համապատասխանությունը օրացուցային պլանով նախատեսված պարտավորությունների հետ, ընդգծելով աշխատանքների հիմնարար և կիրառական նշանակությունը մաթեմատիկայի և մեխանիկայի զարգացման գործում,

**Որոշեցին** - ընդունել վերոնշյալ գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունները, աշխատանքները համարել բավարար և երաշխավորել շարունակել այդ ուղղություններով գիտահետազոտական աշխատանքները:

**2. Լսեցին** - «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագրով» ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի երիտասարդ աշխատակիցների ներկայացրած հայտերի երաշխավորության հարցը:

**Որոշեցին** - Երաշխավորել «Գերձայնային արագությամբ շրջիոսվող բարակապատ մարմինների աերոդինամիկայի եվ կայունության խնդիրներ» թեմայով հայտը վերը նշված ծրագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում ստանալու համար, ղեկավար ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Ե.Ս.Միրզոյան:

**3. Լսեցին** - Ֆակուլտետի ամբիոնների ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը:

**Որոշեցին** - Հաստատել.

1. Ասպիրանտ /հեռակա/ Ելենա Գագիկի Տոնոյանի թեկնածուական ատենախոսության թեման «Հարմոնիկ ֆունկցիաների դասեր n-չափանի տարածություններում», Ա.01.03 – մաթեմատիկական ֆիզիկա մասնագիտությամբ (գիտ. ղեկ.՝ ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Կ.Լ.Ավետիսյան):
2. Ասպիրանտ /հեռակա/ Ավետիք Արայի Փահլևանյանի թեկնածուական ատենախոսության թեման «Սպեկտրալ տեսության որոշ հարցեր», Ա.01.02 - դիֆերենցիալ հավասարումներ մասնագիտությամբ (գիտ. ղեկ.՝ ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Տ.Ն.Հարությունյան):
3. Ասպիրանտ /հեռակա/ Լիա Աշոտի Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեման «Մեդիալ և իդեմպոտենտ համակարգեր», Ա.01.05 – հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ (գիտ. ղեկ.՝ ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յու. Մովսիսյան):

4. Ասպիրանտ (հեռակա) Հասմիկ Հովհիկի Միքաելյանի թեկնածուական ատենախոսության թեման «Ձողերի և սալերի կայունությունը ոչ կոնսերվատիվ խնդիրներում», Ա.02.01 – դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա մասնագիտությամբ (գիտ. ղեկ.՝ ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, պրոֆեսոր Մ.Վ.Բելուբեկյան):
5. Ասպիրանտ /հեռակա/ Դիանա Սերգեյի Դավիդովայի թեկնածուական ատենախոսության թեման «գերկկավարների կառուցվածք», Ա.01.05 – հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ (գիտ. ղեկ.՝ ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յու. Մովսիսյան):

**4. Լսեցին** - ՀՀ պետությունցեից ֆինանսավորվող «Նորմալ օպերատորների սպեկտրալ վերլուծություն և հակադարձ խնդիրներ» գիտական թեմայի ղեկավարի պարտականություններ կատարողի նշանակման հարցը:

**Որոշեցին** - «Նորմալ օպերատորների սպեկտրալ վերլուծություն և հակադարձ խնդիրներ» գիտական թեմայի ղեկավար Ի.Գ.Խաչատրյանի մահվան պատճառով 2008-2010թթ. ժամանակահատվածի ամփոփիչ հաշվետվությունը ներկայացնելու համար թեմայի կատարող ֆ.մ.գ. դոկտոր Մ.Ի.Կարախանյանին հաստատել որպես գիտական թեմայի ղեկավարի պարտականություններ կատարող:

**6. Լսեցին** - Օպտիմալ կառավարման տեսության և մոտավոր մեթոդների ամբիոնի ասպիրանտ Ռաֆայել Էդվարդի Չախմախչյանի ատենախոսության դասիչի փոփոխման հարցը:

***Ներկայացվեց ամբիոնի կարծիքը:***

**Որոշեցին** – Ասպիրանտ Ռ.Է.Չախմախչյանի «Բախումից խուսափող դինամիկ օբյեկտների շարժումների կառավարումն ու օպտիմալացումը» թեկնածուական ատենախոսության դասիչը հաստատել Ա.02.01. – Տեսական մեխանիկա մասնագիտությամբ:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան